

ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Մարտի 9-ին, շաբաթ, ժամը 13-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ 1965—66 ուսումնական տարվա հոգ. ճեմարանի շրջանավարտներ բարեշնորհ եղիշե, Գրիգոր և Հովհաննես սարկավագների ավարտաճառերի բանավոր պաշտպանությունը՝ գեր. տ. Հայկազուն արք. Աբրահամյանի նախագահության ներքո:

Քննիչ հանձնաժողովը, բաղկացած ճեմարանի դասախոսներ Ա. Հատիտյանից, Պ. Շահբազյանից, արժ. տ. Հովհաննես քահ. Մարուքյանից և Ս. Հովիվյանից, առանձին քննության առնելով ներկայացված ավարտաճառերը միջնորդություն էր հարուցել հոգ. ճեմարանի տեսչության մոտ բանավոր պաշտպանության թույլտվության համար:

Ներկայացված դիպլոմային աշխատանքների գնահատականի և թերությունների մասին հանձնաժողովի ներկայացրած զեկուցագրից հետո, խոսք տրվեց շրջանավարտ սարկավագներին: Նրանցից յուրաքանչյուրը բանավոր պաշտպանության ժամանակ ներկայացրեց իր նյութը և պատասխանեց հանձնաժողովի և ներկաների հարցերին:

Բարեշնորհ Եղիշե սրկ. Բաղրամյանի ավարտաճառի նյութն էր «Ս. Վահան Գողթնացի» բաղկացած 7 գլուխներից: Գրիգոր սրկ. Բունիաթյանի նյութն էր «Շահապիվանի ժողովը» բաղկացած 5 գլուխներից, իսկ Հովհաննես սրկ. Հակոբյանինը՝ «Գրիգոր Տղա» բաղկացած 6 գլուխներից:

Հոգ. ճեմարանի տեսուչ հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը վերջում ամփոփեց ավարտաճառերի բանավոր պաշտպանության արդյունքները և խնդրեց ճեմարանի նախկին տեսուչ գեր. տ. Հայկազուն արք. Աբրահամյանին հանուն Վեհափառ Հայրապետի շրջանավարտներին հանձնել դիպլոմները:

Գեր. սրբազանը նախ շնորհավորական խոսքեր ուղղեց շրջանավարտներին հորդորելով նրանց երբեք չլքել իրենց գրասեղանն ու գրիչը: Նա հատկապես շեշտեց այն միտքը, որ ոչ թե ավարտվում է նրանց ուսման ընթացքը, այլ այն նոր պետք է սկսվի, որից հետո ընդհանուր խանդավառության ու ծափահարությունների մեջ նրանց հանձնեց դիպլոմները:

Դիպլոմների հանձնումից հետո տեսուչ հայր սուրբը շրջանավարտներին առաջնորդեց Վեհարան, ուր նրանք ներկայացան Վեհափառ Հայրապետին և ստացան նրա օրհնությունները:

Վեհափառ Հայրապետը շնորհավորեց նրանց և թելադրեց, որ Մայր Աթոռի երիտասարդ միաբանները լինեն ոչ միայն աղոթքի ու աշխատանքի, այլ նաև գիր ու գրականության մարդիկ:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետը բարեշնորհ սարկավագներին մեկ-մեկ ժամացույց նվիրեց:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս շնորհավորում է շրջանավարտներին և մաղթում, որ նրանք լինեն Մայր Աթոռին և Վեհափառ Հայրապետին արժանի միաբաններ և զավակներ: